

ՍՈՑԻՈՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԵԳԻՏԻՄԱՑՄԱՆ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գ. Ա. ՍՈՐՈՍՈՆՅԱՆ

Կառավարությունն ու կառավարողներն ունեն սոսկ այն իշխանությունը, որը ճանաչվում է, քանզի իշխանությունը չի տրվում, այն վաստակում են:

Կերատրի

Հայտնի է, որ հասարակության սոցիոմշակութային ոլորտն ավելի ինտրո է, դժվարահաս, ուստի նաև՝ նվազ հակված դեպի արմատական, կտրուկ հեղափոխումները, քան սահմանադրորեն նոր գոյավիճակ ձեռք բերած իրավաքաղաքական համակարգը: Անցումային հասարակություններում իրականացվող փոխակերպումների ընթացքում կարծրացած նախատրամադրվածությունների, սոցիոմշակութային նախընթաց փորձի ակտիվ առկայությունը նպաստում է առանձնահատուկ երկբնորանքային-գուգահեռական իրավիճակի ձևավորմանը: Նման իրավիճակի սոցիալական ամենակարևոր բնութագիծը դառնում է անկայունությունը: Ցանկացած հասարակության նպատակը կայուն համակեցության հաստատումն է: Փոխակերպվող հասարակության ամբողջական բարեփոխման համար առավել քան կարևոր է սոցիոմշակութային որոշակիության հաստատումը, որով հնարավոր կլինի հաղթահարել հարաբերությունների ու արժեքների գուգահեռական գործառնության տրանսֆորմացիոն վիճակը և հասնել կայունության: Սակայն ժամանակն է, որ XXI դարում մարդկային հասարակությունը հետամուտ լինի ոչ թե հարկադրական-մեխանիկական, այլ ինքնակամ-օրգանական, այսինքն՝ բարոյապես ընդունելի կայունության հաստատմանը: Իշխանության լեգիտիմության զուտ քաղաքագիտական պրոբլեմն անցումային հասարակություններում վերափոխվում է ազգային կյանքի կենսական անհրաժեշտության խնդրի: Ուստի փոխակերպումների սոցիոմշակութային լեգիտիմացման խնդիրը հետհամայնավարական անցումային հասարակություններում ձեռք է բերում կարևոր տեսական և առավել քան գործնական նշանակություն:

Ցանկացած բարեփոխում, եթե այն հիմնված չէ համակարգապահական ոգեղեն արժեքների վրա, չի կարող արդյունավետ լինել: Ահա թե ինչու անհրաժեշտ է բացահայտել ոգեղենության սոցիալական իմաստն ու նշանակությունը, պարզաբանել համակարգային փոխակերպումների բարոյական լեգիտիմացման հիմնախնդիրը, առավել ևս, որ այդ գործընթացի բարոյագաղափարաբանական հիմունքները երբեմն ավելի կարևոր նշանակություն ունեն հատկապես կոլեկտիվ ինքնանույնականության պահպանման համար, քան իրավաքաղաքական օրինականությունը:

«Ավանդական հասարակություններում» աշխարհի նկատմամբ հոգևոր վերաբերմունքի մեջ միաժամանակ ներառված էին գիտելիքը, գիտությունը, բարոյականությունը և առաքինությունը: Սակայն XIX դարից սկսած՝ հոգևորն աստիճանաբար տրոհվում է: Գերիշխող է դառնում աշխարհի բացատրության սցենարի ստանդարտ-նացիոնալիստական սկզբունքը, որի հետևանքով մարդկային հա-

րաբերություններում սոցիոմշակութային հիմունքները (բարոյականություն, առաքինություն և այլն) հետզհետե կորցնում են երբեմնի դերն ու նշանակությունը: Այդ ամենի հետևանքով արդի քաղաքակրթության սոցիոմշակութային իմպերատիվների համատեքստում իրավունքը և իրավական հարաբերությունները բարոյականի նկատմամբ գերակա դիրք ձեռք բերեցին: Ի տարբերություն աշխարհի նկատմամբ բարոյական և գեղագիտական հարաբերության՝ իրավունքը և տեխնածին քաղաքակրթությունը հենվում են բացառապես ուսցիոնալության, բանականության վրա, որոնք աստիճանաբար ճնշում են ամբողջական հոգևոր կյանքի հարուստ բազմազանությունը՝ մարդկանց դարձնելով ավելի գործարար, բայց և անհոգի, ավելի հարուստ, բայց և անտարբեր, ավելի ակտիվ, բայց և օտարված: Մ. Վեբերը այդ կապակցությամբ գրում է. «Կապիտալի ոգով համակված մարդիկ այժմ, եթե եկեղեցու հանդեպ թշնամական չեն, ապա լրիվ անտարբեր են: Դրախտի բարեպաշտ ձանձրույթը չի գայթակղում գործարար խառնվածքներին, իսկ կրոնը նրանց թվում է միայն որպես այս աշխարհում մարդկանց աշխատանքային գործունեությունից շեղելու միջոց»¹: Այս առնչությամբ անցումային հասարակություններում սոցիոմշակութային երկրնորանքների հիմնախնդիրը տեսական ու գործնական առանձնահատուկ հնչեղություն է ձեռք բերում: Բանն այն է, որ շուկայական հարաբերությունների պայմաններում մարդիկ մի կողմից ստիպված են գործել ուսցիոնալ-պրագմատիկ սկզբունքներով, այլապես դուրս կմնան մրցակցությունից, մյուս կողմից, մնալով անցյալի սոցիոմշակութային արժեքների կապանքներում, չեն համակերպվում նոր հարաբերություններին ու արժեքներին: Անձնական հաջողության միջոցով նոր իրողությունների պարտադրանքները հակասության մեջ են մտնում նախընթաց բարոյական ու աշխարհայացքային պատկերացումների հետ: Աստիճանաբար ձևավորվում է անցումային հասարակությանը բնորոշ մարդու նոր տիպ, որի համար բոլոր այն գաղափարներն ու արժեքները, ավանդույթներն ու ծեսերը, որոնք չեն առնչվում սեփական շահի և նպատակների հետ, կորցնում են իրենց իմաստն ու գործառնական նշանակությունը: Մարդու այս տիպի հոգևոր պատկերը, ըստ Վեբերի, որոշվում է բացառապես իր գործարար հատկանիշներով:

Այսպիսով, անցումային հասարակություններում սոցիոմշակութային լեգիտիմության հիմնախնդիրը չունի միանշանակ լուծում, քանի որ, ինչպես ցույց է տալիս բարեփոխումների փորձը, արդի քաղաքակրթության արժեքների փոխառությունը հաճախ հանդիպում է սոցիալական համակարգի և ազգային կեցության ներքին դիմադրությանը: Պատճառն այն է, որ սոցիոմշակութային փոխակերպումները երբեմն վերաճում են «ընդօրինակման էքսպանսիայի»՝ առանց հաշվի առնելու նոր պայմաններում դրանց կիրառական հնարավորությունները: Այդ առումով փոխակերպումների առաջին փուլում սոցիոմշակութային լեգիտիմության հաստատման նախնական պայմանը քաղաքակրթության արդի սոցիոմշակութային իմպերատիվները (շուկայական հարաբերություններ, ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն և այլն) էթնոկեցության և ազգային ինքնության ավանդական արժեքների տեսանկյունից յուրացնելն ու «ազգայնացնելն» է: Հասարակության «պահպանողական» մեծամասնությունը, որպես կանոն, դժվարությամբ է հարմարվում սոցիոմշակութային նոր արժեքներին, անգամ եթե դրանք չեն հակասում գոյատևման նրանց կենսակերպին: Հասարակության այդ խավի համար սոցիոմշակութային նոր արժեքները մնում են ոչ լեգիտիմ այնքան ժամանակ, քանի դեռ չեն հաղթահարվել մտածողության նախկին կարծրատիպերը: Հասարակության մեջ միշտ էլ կա նորի նկատմամբ խիստ ընկալունակ մի խավ, որն անցումային փուլերում արագ համակերպվում է ժամանակի պահանջներին

¹ М. Вебер. Протестантская этика и дух капитализма. Избранные произведения. М., 1990, с. 94.

և չունի սոցիոմշակութային լեգիտիմության խնդիր: Սոցիոմշակութային նոր արժեքների լեգիտիմության հարցում սոցիալական խավերի տարբեր վերաբերմունքը ցույց է տալիս, որ մշակույթը շատ ավելի հեշտ է փոխանցում պատրաստի արդյունքները, քան նոր պայմաններում դրանց արդյունավետ վերարտադրության մեխանիզմները: Այդ տեսակետից, օրինակ, ուշագրավ է, որ արևմտյան քաղաքակրթության սոցիոմշակութային արժեքների պատրաստի գաղափարներն անցումային հասարակություններում արագ տարածվեցին, մինչդեռ դրանց ամենօրյա «արտադրությունը» մինչ օրս էլ կազմակերպված չէ:

Ամբողջատիրական հասարակությունների փլուզումից հետո սկսվեց հասարակական հարաբերությունների զարգացման նոր փուլը: Շուկան, օգուտն ու եկամուտը գործնականում դարձան մարդկանց կյանքի համընդհանուր ձև, իրապես գլոբալ մի երևույթ, որը հնարավոր դարձրեց բաց հասարակությունը հոչակել որպես «համայն մարդկության լուսավոր ապագա»: Մանրակրկիտ հաշվարկը, առքն ու վաճառքը, շահն ու օգուտը նյութական արտադրության և սպառման ոլորտից մեկեն թափանցեցին կյանքի մյուս ոլորտներ՝ արմատապես փոխելով մարդկանց սոցիոմշակութային պատկերացումները, արժեքային կողմնորոշումներն ու բարոյական չափորոշիչները: Զևավորվում է սոցիոմի նոր տիպ՝ տնտեսական հասարակություն, և դրան համապատասխան մարդու նոր տիպ՝ Homo economicus: Տնտեսությունը համակարգաստեղծ գործոնից վերածվում է ամբողջական համակարգի: Այլ կերպ ասած՝ էկոնոմիզմը աստիճանաբար վերաճում է սոցիալապես ինստիտուցիոնալիզացված էզոիզմի², ուր բարոյական պարտադրականությունն իր տեղը զիջում է առընթեր գոյին: Անօրյա հոգը դառնում է հումանիտար էնտրոպիայի առանձնահատուկ վիճակ: «Տնտեսական մարդը» դառնում է անդեմ, ինչը, սակայն, չի նշանակում, թե նա թանձրամիտ է կամ անկարողունակ: Մարդու այս նոր տիպը XX դարի սոցիոլոգիան ներկայացնում է «ակտոր» հասկացությամբ, որով, ըստ երևույթին, կարելի է բնութագրել շուկայական-տեխնոլոգիական դարաշրջանի պատմականորեն առանձնահատուկ մարդու նոր տիպը: Ակտորն այն ռազիոնալության կրողն է, որը գիտակցաբար և հետևողականորեն ձգտում է վաղորոք դրված նպատակի անպայման իրականացմանը: Նա «բանական էզոիստ» է, որի համար զգացմունքներն ու ապրումները կորցրել են ինքնուրույն արժեքները: Առավելագույնս սահմանափակելով աշխարհընկալման հուզական և գեղագիտական փուլը՝ ակտորը կառչում է կեցության իրադրային-պարագայական օգտապաշտությանը: «Տեխնիկական քաղաքակրթությունը,- գրում է Ն. Բերդյաևը,- ըստ իր էության իմպերսոնալ է: Այն պահանջում է մարդու ակտիվություն, սակայն չի ուզում, որ նա անձ լինի»³: Ակտորն օտարման արդյունք է, արդյունք է անոմիայի, ի վերջո նա բաց հասարակության ազատ, բայց և «քաղաքակրթական» պաղ հարաբերությունների հիմնական դերակատարն է: Անձի ակտոր դառնալու պրոցեսին զուգընթաց մշակույթը՝ որպես սոցիալական հարաբերությունների կարգավորիչ, աստիճանաբար փոխարինվում է ամենատարբեր տեխնոլոգիաներով և սոցիոտեխնիկայով: Փոխակերպվող հասարակություններում հասարակական գիտակցությունը բնութագրվում է մշակութավախությամբ (կուլտուրոֆոբիա)⁴, որի հետևանքով սոցիոմշակութային լեգիտիմության հիմնախնդիրը ձեռք է բերում լրացուցիչ բովանդակային ծանրաբեռնվածություն: Մշակութային «բարդություններով» ծանրաբեռնվածությունը անցումային հասարակության անդամներին խանգարում է նոր սոցիոմշակութային

² Տե՛ս В. А. Кутырев, *Духовность, экономизм и "после": драма взаимодействия*, "Вопросы философии", 2001, № 8, էջ 61:

³ Н. Бердяев, *Человек и машина*. "Вопросы философии", 1989, № 2, с. 149.

⁴ Տե՛ս А. С. Панарин, *Искушение глобализмом*, М., 2002, էջ 103:

միջոցներով հասնելու այն նպատակների իրագործմանը, որոնք «հին» մշակույթ-ները կգնահատեին որպես դատապարտելի: Այդ տեսակետից անցումային հասարակություններում «մշակութափոխությունը» կարող է ստանալ երկիմաստ դրսևորում. առաջին՝ ավանդական արժեքներով ու կողմնորոշումներով ապրող մարդկանց մի զգալի հատված սոցիոմշակութային նոր արժեքներն ընկալում է որպես փորձարկված ապրելակերպն ու հարաբերությունները վտանգող երևույթ և կանխակալ, բացասական վերաբերմունք ունի դրանց նկատմամբ: Ծայրահեղ այս մտնեցումը քաղաքականության մեջ կարող է դրսևորվել ազգայնամոլության և պահպանողականության ձևով: Երկրորդ՝ ազատականությունը և անցումային շրջանին բնորոշ շուկայական թողտվությունը գործունեության սկզբունք դարձրած մարդկանց մեկ այլ խավի համար «մշակութափոխությունը» այլ մեկնաբանություն ունի: Ի հայտ է գալիս սոցիալական նոր «ընտրանի», որը հասարակական կարծիքը, ազգային ավանդույթներն ու սովորույթները ընկալում է որպես իր գործունեությանը խոչընդոտող հանգամանքներ և չի ընդունում վարքը կարգավորող սոցիոմշակութային որևէ արժեք ու պարտադրանք: Այս երևույթի ծայրահեղ դրսևորումը քաղաքականության մեջ կարող է հանգեցնել գաղափարաքաղաքական անսկզբունքայնության և անդեմության: Էկոնոմիզմի ուսիլիտար աշխարհընկալման համաձայն՝ «տնտեսություն-ոչտնտեսություն» դիստոմիայի շրջանակներում մշակութային դասական ժառանգությունը մեկնաբանվում է որպես իրական տնտեսական գործառույթների լուրջ խոչընդոտ: Առօրյա գոյատևման հոգսով համակված մարդիկ խոստացված նյութական չնչին բարիքների դիմաց հաճախ հեշտությամբ հարմարվում են ազգային-հոգևոր արժեքների ձևախեղմանը: Տնտեսությունն սկսում է ընկալվել որպես ազգային մշակույթի խանդոտ մրցակից: Իսկ ի՞նչ կպատահի, եթե հաղթի անհանդուրժող, խանդոտ մրցակիցը: Անցումային հասարակություններում սոցիոմշակութային լեգիտիմության հիմնախընդիրը սոցիալ-փիլիսոփայական վերլուծության ենթարկելու համար անհրաժեշտ է տարբերակել նախ «դասական մշակութային ժառանգություն» և «ազգային մշակութային ժառանգություն» հասկացությունները և երկրորդ՝ պարզաբանել «մշակույթ-հիշողություն» և «մշակույթ-նախագիծ» հասկացությունների բովանդակային ծանրաբեռնվածությունը⁵: Մշակութային ժառանգության այն մասը, որը կոչվում է ազգային ժառանգություն, իրականացնում է անփոխարինելի և շատ կարևոր գործառույթ. այն ազգի՝ որպես կոլեկտիվ պատմական սուբյեկտի, ինքնանույնականության հիմքն է, որն օժտված է հիշողությամբ, կամքով և արժանապատվությամբ:

Սոցիալական պրակտիկայի ցանկացած ոլորտ չի կարող արդյունավետ գործառնել առանց այս կարևորագույն հատկանիշների, քանի որ գործողության իրական սուբյեկտների փոխարեն կունենանք անդեմ դերակատարներ՝ անընդունակ ոչ միայն ինքնուրույն նախաձեռնության, այլև բարեխիղճ կատարողականության: Ժամանակակից քաղաքակրթության «հիվանդության» ախտանիշ հանդիսացող զանգվածային մշակույթը հասարակության լայն շերտերին պարտադրում է գոյության ու գործառնության մի վիճակ, որը սոցիոլոգները ներկայացնում են «անեմիա» (սակավարյունություն, անկամություն) բժշկական տերմինին շատ մոտ «անոմիա» հասկացությամբ:

Ի տարբերություն ազգային մտակեցվածքի, ավանդույթների և հոգևոր ամբարձման տարերային այլ արդյունքների՝ դասական մշակույթը պատկանում է հոգևոր արտադրությանը, այլ կերպ ասած՝ այն կապված է անանց նշանակություն ունեցող մշակութային ստեղծագործությունների արարման հետ: Մշակութային դասական ժառանգությունը բնութագրվում է ունիվերսալությամբ և

⁵ Տե՛ս **А. С. Панарин**, *Глобальное политическое прогнозирование*, М., 2002, էջ 256-259:

երկարակեցությամբ: Օնորհիվ այս հատկանիշների՝ դասական մշակույթն էս-
պես տարբերվում է ժամանակակից զանգվածային հոգևոր արտադրանքից, որը
թեպետ ունիվերսալ է, բայց մակերեսային ու կարճաժամկետ: Զանգվածային
մշակույթի արդյունքները, ինչպես և ժամանակակից նյութական արտադրության
արդյունքները, ենթակա են բարոյական ծերացման: Մոդեռնացման տեսության
հետևորդների ամենամեծ փափագն այն է, որ մշակութային դասական ժառան-
գությունը գրկվի իր հիմնական և ամենամեծ առավելությունից՝ ունիվերսալու-
թյունից և երկարակեցությունից: Դասական մշակույթի դեմ ներկայացվող հիմ-
նական փաստարկը հետևյալն է. դասականությունը, ի տարբերություն արդիա-
կանության, չի համապատասխանում ժամանակի պահանջներին և ժամանակի
հարափոփոխ ոլորտերին: Պարադոքսն այն է, որ «արդիականությունն» ինքը են-
թակա է բարոյական ծերացման: Այդուհանդերձ, արևմտյան հետիմդուստրիալ
քաղաքակրթության հարացույցի համաձայն, նորմատիվային կամ օրինաստեղծ
գործառույթները հաճձնվում են «հետմարդկային» ոլորտին՝ տեխնիկային և տըն-
տեսությանը⁶: Այդ տեսանկյունից, մասնավորապես, անցումային հասարակու-
թյուններում սոցիոմշակութային փոխակերպումների լեգիտիմությունը դժվարու-
թյամբ է հարթում իր ուղին, քանի որ գաղափարայնացված հասարակության
մարդը, որին նաև պարտադրված են որոշակի բարոյականություն և արժեքային
կողմնորոշումներ, արդի ձևայնացված ու ռացիոնալ սոցիոմշակութային իմպե-
րատիվների մեջ չի տեսնում մարդկայինը: Ո՞րն է պատճառը, որ մարդը հայտնը-
վել է ինքնարժեքությունից զուրկ օբյեկտի վիճակում, իսկ տեխնիկատեսակական
համակարգը՝ օրինաստեղծ սուբյեկտի դերում:

Խնդիրն այն է, որ անցումային հասարակությունների սոցիոմշակութային
փոխակերպումներն իրագործող սոցիալ-քաղաքական ընտրանին կարծում է, թե
դեպի «լուսավոր ապագա» տանող ուղին բարեհաջող ընթացք կունենա, եթե հնա-
րավոր լինի լիովին հրաժարվել սոցիոմշակութային նախորդ ժառանգությունից:
Այսօր մշակույթ-հիշողության և մշակույթ-նախագծի հակամարտությունն այնպի-
սի սրության է հասել, որ մշակութափոխությունը դարձել է արդի ռացիոնալ քա-
ղաքակրթության հիմնական հատկանիշը⁷: Տնտեսական արժեքների առաջնա-
յության սկզբունքով ղեկավարվող սոցիալ-քաղաքական ընտրանին կասկածի
տակ է դնում առևտրային նշանակություն չունեցող մշակույթը՝ իբրև ծայրահեղ
ավանդապաշտ և արմատական երևույթ: Ուստի անցումային հասարակություն-
ների սոցիոմշակութային հիմունքների մեջ գերիշխող չափանիշ է դառնում մերկ
շահը: Հոգևոր իշխանության նկատմամբ գործարարության անօրինական հա-
վակությունները հիմնավորվում են շուկայի անսխալականության մասին կաս-
կածելի դրույթով (շուկան է առանձնացնում օգտակարն անօգտակարից, անհրա-
ժեշտը անպետքից):

Չուտ տնտեսական ոլորտում կարելի է համաձայնել շուկայական ընտրու-
թյան արդյունավետության գաղափարի հետ, բայց անթույլատրելի է բոլոր բնա-
գավառներում կուրորեն վստահել շուկայական բնական ընտրությանը: Սոցիո-
մշակութային լեգիտիմության հիմնախնդիրն այս համատեքստում նոր իմաստ և
բովանդակություն է ստանում: Խորհրդային սոցիոմշակութային համակարգն առ-
երևույթ չէր ղեկավարվում առևտրային սկզբունքով, մինչդեռ նրանում հոգևոր
արժեքներն ապրանք էին դառնում այնքանով, որքանով համապատասխանում
էին կոմունիստական գաղափարախոսության շուկային: Հետևաբար խնդիրն
այն չէ, որ որոշ սոցիալական համակարգերում սոցիոմշակույթը զարգանում է
առևտրային սկզբունքով, իսկ մյուսներում՝ հոգևոր և բարոյական: Խնդիրը գոր-
ծառնող մշակույթի լեգիտիմությունն է: Անցումային հասարակություններում

⁶ Տե՛ս В. А. Кутурев, Человек XXI века. Уходящая натура, "Человек", 2001, № 1:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 13:

սոցիոմշակութային փոխակերպումերն ունեն երկու ծայրահեղ դրսևորում: Առաջին՝ շուկայական հարաբերություններն արագ թափանցում են նաև մշակութային ոլորտ և հաճախ ղեկավարվում պահանջարկի ոչ միշտ ընդունելի չափանիշներով: Երկրորդ՝ սոցիոմշակութային փոխակերպումներում գերիշխում է պարզ ընդօրինակման սկզբունքը: Այս ծայրահեղ դրսևորումները սոցիոմշակութային արժեքները դարձնում են ոչ լեգիտիմ, քանի որ առաջին դեպքում շրջանառվող արժեքներն իրադրային են և շուկայի ճաշակից ածանցյալ, իսկ երկրորդ դեպքում չեն բխում էթնոկեցության առանձնահատկություններից: Ասվածից հետևում է, որ անցումային փուլերում բարեփոխումներ իրականացնող սոցիալ-քաղաքական ընտրանին համակարգի արդիականացման նպատակներով կարող է գործադրել նաև «սոցիոմշակութային պարտադրանքներ», որի լեգիտիմությունը պայմանավորված է այն բանով, թե այդ պարտադրանքները որքանով են համապատասխանում էթնոկեցության տվյալ տիպին:

Անցումային շրջանին բնորոշ հարաշարժության որոշակի փուլում կյանքի և մշակույթի բոլոր դրսևորումներն ապրանքային տեսք են ընդունում, այսինքն՝ դառնում են փոխանակային արժեքի օտարելի ձևեր: Ազգային սոցիոմշակութային ժառանգությունը, որպես կանոն, դուալիստական բնույթ ունի. այն, շուկայում գտնվող և վաճառվող ապրանքներից զատ, պարունակում է նաև անհատական և կոլեկտիվ նշանակության անօտարելի արժեքներ: Անհատական մակարդակում այդպիսի արժեքներ են սերը, ոգեշնչումը, ճշմարտությունը, գեղեցիկը և այլն, հասարակական մակարդակում՝ մայրենի լեզուն, նախնիների սուրբ հողը, ազգային մշակույթը, ավանդույթներն ու բարքերը և այլն: Անցումային հասարակության նախապատրաստած հաջորդ անակնկալը մոնոպոլ ապրանքատերերի վերածված իշխող ընտրանու կողմից անցկացվող ազգային հարստության սեփականաշնորհումն է: Ազգային կարողականությունը մենաշնորհած այդ ընտրանին կարող է հանդես գալ որպես ազգային շահի «ապրանքատեր»՝ չունենալով ազգի կողմից տրված որևէ լիազորություն: Ժայրահեղ ազատականության գաղափարախոսությունը պարտադրում է, որպեսզի անօտարելի բոլոր նախկին արժեքները, որոնք ենթակա չէին առջ ու վաճառքի, դառնան օտարելի և փոխանակելի: Սա վերաբերում է ինչպես այն արժեքներին, որոնք անօտարելի էին շնորհիվ իրենց հոգևոր կարգավիճակի, այնպես էլ այն արժեքներին, որոնք անօտարելի էին շնորհիվ իրենց բնական-աշխարհագրական կարգավիճակի: Եթե սոցիալական ուսցիոմշակությունը հանգեցվի համարժեք փոխանակության հարաբերություններին, ինչը շատ բնորոշ է ժամանակաքաղաքական վթարի պայմաններում գործառնող անցումային հասարակություններին, ապա, իսկապես, թե՛ ներքին զգացմունքները, թե՛ կոլեկտիվ արժեքները պետք է գնահատել որպես շուկայական գնահատման արարողակարգի խոչընդոտ: «Ուստի, կոլեկտիվ իմաստներից վերացարկումը և խմբային կայուն նույնականության բացառումն այն հասարակության համար, որը որպես իր հավատո հանգանակ հռչակել է «ազնիվ մրցակցությունը» և ժողովրդավարությունը, դառնում են հարկադրական»⁸: Ժամանակակից շուկան արտաքին ուժի առկայություն չի ենթադրում, սակայն մարդկանց մեծամասնությունը հարկադրված է համաձայնել շուկայի առաջադրած պայմաններին, այլապես նրանք չեն կարող գոյություն ունենալ: Սրանով անհատի ազատությունը շուկայական հարաբերությունների պայմաններում նշանակալիորեն սահմանափակվում է⁹: Շուկայական տնտեսության պայմաններում բարոյականությունը՝ որպես սոցիոմշակութային լեգիտիմության հիմունք, կորցնում է իր գործառնական կարևորությունը: Ազատականության փիլիսոփայության

⁸ А. С. Панарин. Испытание глобализмом. М., 2002, с. 146.

⁹ Ст'ю Э. Фромм, Здоровое общество, "Психоанализ и культура", М., 1995, էջ 351-352:

համաձայն, որի առանցքը դեկոմստրուկտիվիզմի սկզբունքն է, լեզվի տիմ են սոցիալական այն պրակտիկաները, որոնք կապված են արդյունավետության և տեխնոլոգիականության հետ: Ըստ հետմոդեռնիզմի՝ յուրաքանչյուր մշակույթ ձևավորում է մի շարք հիմնարար իմաստաստեղծ տեքստեր, որոնք, կազմվելով բարոյ և գեղեցիկի, ինչպես նաև ճշմարտության չափանիշների համաձայն, լեզվի տիմացնում են հասարակական տարբեր պրակտիկաներ: Այդ իմաստաստեղծ տեքստերը մասնագիտական գրականության մեջ անվանվում են «մետապատմըվածքներ»¹⁰: Փորձենք պարզել, թե արդի քաղաքակրթության մեջ որոնք են «մետապատմվածքի» լեզվի տիմության սոցիոմշակութային չափանիշները:

Ըստ «Էլիտար ժողովրդավարության» հայեցակարգի, որով առաջնորդվում է նաև անցումային հասարակության սոցիալ-քաղաքական համակարգը, մշակույթների անտրստունջ երկխոսության ուղին չափազանց բարդ ու խնդրահարույց է, քանի որ մշակութային «հանդերձանքը» թաքցնում է ասոցիալ զգայականության էությունը: Ըստ այդ հայեցակարգի՝ մշակույթները տարանջատում են, միանդեռ «հավերժական բնագրը» մարմնականը, միավորում է: Այստեղից բխում է պարզունակ հաճոյաշատի ջատագովությունը և մարմնի խոռվությունն ընդդեմ ոգու: Աղոթքեր ներկայով բավարարումը մարդուն ազատում է ամենագո «վախճանաբանության» բռնությունից: «Խաղային գոյությունը» նախընտրելի է «մետապատմվածքների» նկատմամբ միամիտ հավատից: Փաստորեն պատմական այլընտրանքները մերժող և ներկան հավերժացնելու մտադիր աղոթքերը հայտնվում է հետընթաց միտումների կապանքներում, որոնք կարող են արթնացնել անցյալի վատթարագույն հատկանիշները¹¹: Նրանք, ովքեր մտադիր են ապագայի ցանկացած այլընտրանքի վարկաբեկման միջոցով քաղաքակրթությունը պաշտպանել մոլեռանդությունից և արմատականությունից, խիզախում են ապագայի արմատականներին փոխարինել հեռավոր անցյալի ավելի դաժան արմատականներով, քանզի անցյալից հեռացվածության չափը միաժամանակ նաև ոգեշնչվող արմատականության չափն է:

Հաշվի առնելով արդիականության խիստ պրագմատիկ և ռացիոնալ միտումները՝ XX դարի խոշորագույն մտածող Մ. Հայդեգերը գիտակցության հարմարվողական ռեակցիաներին հակադրում է էկզիստենցիալ ձգտումը դեպի անեղծ կեցություն, որին կարելի է հասնել ներկայի և անցյալից (նախահիմք) ու ապագայից (նախագիծ) եկող ազդակների հանդիպակաց կրճատման միջոցով¹²:

Ասվածից հետևում է, որ արդիականության պատմափիլիսոփայական որոշիչ հիմնախնդիրն այն է, թե կարելի է արդյոք դասական մշակութային ժառանգությունն այնպես վերակառուցել, որ հնարավոր լինի հաղթահարել ուտիլիտար-պրագմատիկի գրաքննությունը և անկորուստ անցնել նոր ապագա:

Հետաքրքրատիրական հասարակություններում իրականացվող սոցիոմշակութային փոխակերպումները հիմնականում պայմանավորված են սահմանադրական և իրավաքաղաքական նոր կարգի հաստատմամբ, սակայն այդ փոխակերպումները չեն կանոնակարգվում միայն քաղաքական իշխանությամբ կամ տրնտեսական նպատակահարմարությամբ: Կան ոչ առարկայական և ոչ նյութական շատ էական հիմունքներ, որոնք ազդում են քաղաքական իշխանության արդյունավետության վրա: Այդ հիմունքներն արժեքային բնույթ ունեն և պայմանավորում են սոցիոմշակութային փոխակերպումների լեզվի տիմությունը: «Որքան բարձր է ...լեզվի տիմության մակարդակը, այնքան մեծ են հասարակությունը նվազագույն

¹⁰ Տե՛ս Ж.-Ф. Лиотар, Состояние постмодерна, СПб., 1998, էջ 12:

¹¹ Տե՛ս В. М. Межуев, Проблема современности в контексте модернизации и глобализации, "Полития", 2000, № 3, էջ 109:

¹² Տե՛ս М. Хайдеггер, Бытие и время, М., 1997, էջ 8:

ծախսերով կառավարելու հնարավորությունները¹³։ Իրավական և քաղաքական կարգը կառուցվում է մշակութային հզոր հիմքի վրա և «գոյություն ունի միայն այնտեղ, որտեղ ընդունվում է, որ պետությունից անկախ հասարակությունը տնօրինում է այն միջոցները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի անհատն ընդունի և պահպանի իրենց ծագմամբ համամշակութային բարոյական նորմերը»¹⁴։

Անցումային հասարակություններում դրսևորվող սոցիոմշակութային փոխակերպումները, որոնք ընթանում են ծայրահեղ ազատականության ուղիով, կազմալուծում են հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը, հետևաբար և՛ հասարակական ինստիտուտները։ Մշակութային հիշողությամբ անցյալից ժառանգված իմաստա-արժեքային համակարգերն ու նույնականության տիպերը (թե՛ կոլեկտիվ, թե՛ անհատական), ապագործառնական նշանակություն են ստանում¹⁵։ Ահա թե ինչու փոխակերպումների սոցիոմշակութային լեգիտիմացման խնդիրն անցումային հասարակություններում ձեռք է բերում համակարգապահական նշանակություն։ Ըստ ամենայնի, սոցիոմշակութային լեգիտիմացման ամենահուսալի չափանիշն է էթնոկեցությանը ներքուստ բնորոշ մշակութային ժառանգության և քաղաքակրթական հիմնարար արժեքների զուգակշռությունը։ Ուստի համակարգային ճգնաժամից կարելի է դուրս գալ համաշխարհային փորձի և սեփական կեցության առանձնահատկությունների համատեղման միջոցով։ Ակնհայտ է, որ գլոբալացման արդի պայմաններում ազգային համար կազմավորվում է կեցության գոյատևման նոր միջավայր, հենց միևնույն ազգային պահպանման ու զարգացման համար մրցունակության ու մարտունակության կազմավորման նոր, առավել խստապահանջ ասպարեզ։

Ամբողջատիրական համակարգի սոցիոմշակութային կարգավորիչներից մեկը գաղափարաքաղաքական պարտադրանքների միջոցով մարդկանց պահանջմունքների և հավակնությունների սահմանափակումն էր։ Անցումային հասարակություններում հաճախ սոցիալական շերտավորումն ընթանում է ոչ լեգիտիմ ճանապարհով, որի հետևանքով աստիճանաբար սոցիոմշակութային կարգավորիչներ են դառնում մարդկանց հնարավորություններից չբխող հավակնություններն ու ցանկությունները։ Արդյունքում նոր սոցիոմշակութային լեգիտիմությունը հայտնվում է ճգնաժամի մեջ։

Ո՞րն է բարոյական այդ ճգնաժամի պատճառը։ Խնդիրն այն է, որ փոխակերպվող էթնոհամակեցության յուրաքանչյուր տիպ մշակում է լեգիտիմության սոցիոմշակութային իր հիմունքները։ Արևմուտքից հնարավոր է փոխառել իրավաքաղաքական, ինստիտուցիոնալ, կազմակերպչական շատ արժեքներ, բայց լեգիտիմության սոցիոմշակութային որևէ հիմունք փոխառել հնարավոր չէ։ Լեգիտիմության սոցիոմշակութային դետերմինանտները շատ ավելի խորն են՝ ամբարված «մշակույթ-հիշողության» մեջ, ուստի և արխետիպային նշանակություն ունեն։ Ըստ էության սոցիոմշակութային լեգիտիմացումը շատ ավելին է, քան սոսկական իրավական օրինականացումը, քանի որ այն էթնոհամակեցության տվյալ տիպին բնորոշ ժողովրդական հավատի յուրօրինակ, կարելի է ասել, ապրիորի ձև է։

Հետամբողջատիրական անցումային հասարակությունները, որոնք առավելաբար ավելի հարուստ «մշակույթ-հիշողություն» ունեն, կարևորելով հանդերձ լեգիտիմության իրավաքաղաքական կողմը, իրավունք չունեն անտեսելու դրա

¹³ В. Е. Чиркин. Легализация и легитимизация государственной власти. "Государство и право", 1995, № 5, с. 67.

¹⁴ Э. Ю. Соловьев. Право, свобода, демократия: Материалы "круглого стола". "Вопросы философии", 1990, № 6, с. 5.

¹⁵ St'u Ш. Эйзенштадт, Революция и преобразование общества, М., 1999, էջ 82-89:

սոցիոմշակութային տեսանկյունը: Ի տարբերություն Արևմուտքի՝ քաղաքական ասպեկտները մեծամասնությունը, որը լիազորված չէ «ճշմարտություն-արդարություն-բարոյականություն» եռամիասնության կողմից, սոցիոմշակութային առումով լեզվատիրման չի ընկալվի: Այն կլինի ժողովրդի «հոգևոր սանկցիան» չստացած ժամանակակից-պատահական մեծամասնություն, որը ցանկացած պահի կարող է կորցնել իր դիրքերը: Եվ ճիշտ հակառակը՝ ժողովրդական համակրանքին արժանացած փոքրամասնությունն ավելի ֆունկցիոնալ կարող է լինել, հետևաբար նաև՝ ավելի ընդունելի ու լեզվատիրման: Սոցիոմշակութային լեզվատիրմության ամենակարևոր հիմքն ազգի հոգևոր ինքնորոշումն է: Որպեսզի անցումային հասարակություններում փոխակերպումները սոցիոմշակութային առումով լեզվատիրման լինեն, պետք է ստանան ոչ միայն հարափոփոխ քաղաքական մեծամասնության, այլև հոգևոր իմաստով որակյալ մեծամասնության համաձայնությունը:

Հետհամայնավարական անցումային հասարակություններում հաստատված ժողովրդավարական իշխանությունները փորձում են ամեն կերպ հրաժարվել գաղափարախոսական և բարոյական հիմնահարցերից՝ դրանց նկատմամբ պահպանելով չեզոք վերաբերմունք: Դրա վկայությունն է՝ «այն ամենը, ինչ արգելված չէ, թույլատրելի է» սկզբունքի անվերապահ կիրառումը, որն, ինչ խոսք, իրավական պետության այն լուրջ ձեռքբերումն է, որն անսահմանափակ անհատական նախաձեռնություն դրսևորելու ազատություն է ընձեռում: Սակայն ժողովրդավարական ավանդույթներից և քաղաքացիական հասարակության կառույցներից զուրկ երկրներում ժողովրդավարական արժեքների արմատավորումը հանդիպում է օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի էական խոչընդոտների, ուստի պետության հրաժարումը մարդկային իրավունքների և ազատությունների երաշխավորման իր սահմանադրական պարտավորություններից, հատկապես քաղաքացիների իրավական պաշտպանության, հասարակության հոգևոր գործունեության, սոցիալական պահպանության ոլորտում կարող է ունենալ ամենաողորմագույն հետևանքներ: Մի կողմից՝ պատմության դրական փորձով ապացուցված է, որ ժողովրդավարությունը պահանջում է շուկայական-մրցակցային հարաբերությունների հարգում և պետության «հայրական հոգատարության» կտրուկ նվազեցում, սակայն, մյուս կողմից, հասարակության սոցիալապես խոցելի շերտերի շահերից կտրված ազատական բարեփոխումները հասարակության այդ մեծամասնությանը մատնում են ծայրահեղ թշվառության՝ թե՛ ի չիք դարձնելով կառուցվածքային, տնտեսական բարեփոխումների իրական նպատակները, թե՛ վարկաբեկելով բարեփոխիչների քաղաքական թիմը: Հասարակության տնտեսական, սոցիալական կյանքին պետության չմիջամտելու սկզբունքի միակողմանիորեն կիրառումը, անցման դժվարին ու հակասական փուլում կարգավորման իր գործառույթներից հրաժարումը խորացնում են անկման՝ օբյեկտիվորեն հարուցած բացասական հետևանքները, հանգեցնում պետությունից քաղաքացիների օտարմանը:

Հետհամայնավարական փոխակերպվող հասարակություններին բնորոշ լեզվատիրմության ճգնաժամը ունի մեկ այլ պայմանավորվածություն ևս. անցումային հասարակությունները Արևմուտքից տարերայնորեն փոխառում են անհատապաշտության անարդյունավետ մոդելը: Ավանդական կոլեկտիվության տեղում և նրա փոխարեն ձևավորվում է ոչ թե ինդիվիդուալիզմի գործունյա, արդյունավետ տիպ, այլ անպատասխանատու «սպառողական» ինդիվիդուալիզմի հեշտասեր տիպ: Արդյունքը լինում է այն, որ «հայրական հոգատարությունից» զրկված հետհամայնավարական անցումային հասարակության հիասթափված քաղաքացին հայտնվում է անկառավարելի մի խաչմերուկում՝ չիմանալով՝ ուր, ինչով և ինչպես գնալ: Այնպես որ, սոցիալական նորամուծությունների համար ավանդույթներից շուտափույթ և անվերապահորեն ձեռքազատվելու անհամբեր ձգտումը հանգեց-

նում է սոցիոմշակութային ամենալուրջ ձևախեղումների, անգամ՝ նույնականության կորստի: «Ազգային մշակույթի ամբողջական հենքի, ավանդույթների և հավատալիքների ոչնչացումը երաշխավորում է ոչ թե «ազատականացման» հաջողությունը, այլ պարտությունն ու կործանումը»¹⁶: Որքան անընթացաբար, առավել ևս կոպիտ է վերաբերմունքն ազգային ավանդույթի նկատմամբ, այնքան հավանական է թշնամական դիրքորոշումը իրականացվող բարեփոխումների հանդեպ: Ավանդույթների միասնական, ընդհանուր դաշտի սոցիոմշակութային դիրքորոշումների համապատասխանությունը, ըստ էության, «...մրցակցության հոգեբանական նախապայմանն է: Միայն այն դեպքում, երբ հակադիր և պայքարող կողմերը խոսում են նույն լեզվով, հետևում միևնույն կանոններին..., ընդունակ են իրենց շահերի համար պայքարել բանականորեն, առանց բռնության: Հակառակ դեպքում շուկան կվերածվեր ռազմադաշտի»¹⁷: Ազգային ժառանգությունը և նույնականության պահպանման ներքին պահանջմունքները պայմանավորում են փոխակերպվող հասարակության սոցիոմշակութային լեզվի մասնաճյուղի չափը: Երկիրը կհայտնվի գործառնության խիստ դրամատիկ և վտանգավոր գոտում, եթե քաղաքական իշխանությունը սոցիոմշակութային պլյուրալիզմի նկատմամբ անհանդուրժող կեցվածք ընդունի: Ահա թե ինչու անցումային հասարակություններում համակեցության մթնոլորտ ստեղծելու համար կարևոր է «սոցիոմշակութային համաձայնության» սկզբունքը: Համաձայնությունը ցանկացած հասարակության ներունակ հատկանիշն է: Այն ընդհանուր պահանջմունքներ, շահեր և նպատակներ ունեցող սոցիալական սուբյեկտների միջև փոխգործակցության վիճակը, որակը և ընթացքը ներկայացնող իրողությունների ամբողջությունն է¹⁸: Համաձայնությունը սոցիալական նորմերի լեզվի միջոցով և այն ընդհանուր հայտանիշն է, որն արժեքային տեսանկյունից բնութագրում է փոխակերպումների հասարակայնորեն ընդունելի սոցիոմշակութային համակարգը, որի առանցքը բարոյապես ընդունելի նորմերի ու կանոնների ամբողջությունն է:

Սոցիոմշակութային լեզվի միջոցով և այն անհրաժեշտ գործոնն է, որն պահովում է սոցիալական համաձայնության և սոցիալական կարգի պահպանումը: Եթե անհատական, խմբային, ինստիտուցիոնալ արժեքները հակասում են հասարակության մեջ գործող արժեքներին և նորմերին, սոցիալական փոխգործակցության մեջ նկատվում է տարհամաձայնություն, խոտվություն, սոցիալական լարվածության և դիմակայության մակարդակի կտրուկ աճ և ճիշտ հակառակը՝ դրանց համապատասխանությունը և ներդաշնակությունը նպաստում է սոցիալական համաձայնության և կարգի լինելիությանը: Մշակույթի մեջ ամրագրված իրավական անհակակշիռ, իմպերատիվ արժեքները որոշում են սոցիալական նորմերի կայունության աստիճանը: Գործող իրավական նորմերի բարոյական արդարացումը սոցիոմշակութային լեզվի միջոցով բարձրագույն ձևն է: Լեզվի միջոցով և ինստիտուցիոնալ կանոնների և նորմերի կրավորական յուրացումը չէ: Միայն սոցիոմշակութային համաձայնության լեզվի միջոցով դաշտի աստիճանական ընդլայնմամբ հնարավոր կլինի փոխակերպվող հասարակությունում հաստատել սոցիալական կայուն համակեցության համերաշխ մթնոլորտ: Փոխակերպումների սոցիոմշակութային լեզվի միջոցով հասարակականի և անհատականի փոխհարաբերության այն յուրահատուկ հայտանիշն է, որը բնութագրում է համակարգային տրանսֆորմացիայի անտրոպոսոցիետալ համապատասխանության վիճակը:

¹⁶ А. С. Панарин. Политология. М., 2000, с. 438.

¹⁷ С. Москвичи. Машина, творящая богов. М., 1998, с.160.

¹⁸ Ст'ю М. М. Акулич, Функционально-целевое согласие: становление и развитие, "Социологические исследования", 2002, № 1, էջ 7:

Կոլեկտիվիստական ծայրահեղություններին հակադրված արմատական ազատականությունը, որ մեծապես բնորոշ է անցումային հասարակություններին, ի վերջո ընկնում է մեկ այլ ծայրահեղության մեջ՝ քամահրելով դարերի փորձությանը ստուգված ու արդարացված էթնոհամակեցության սոցիոմշակութային արժեքները: Մինչդեռ, տառապանքով ձեռքբերված փորձառությունը վկայում է, որ հասարակությունը չի կարող նորմալ գործառնել, բարեփոխվել, առավել ևս զարգանալ, «...եթե կառավարման պայմանագրային ձևից դուրս և դրանից վեր գոյություն չունեն կոլեկտիվ սրբությունների և արժեքների (ընդգծումն իմն է - Գ. Ա.) այն իմպերատիվները և արգելանքները, որոնք մարդկանց կապում են հասարակականի հետ»¹⁹:

Միայն սեփական ինքնահաղթահարմամբ Մարդու վերստեղծումն ապահովող բարոյակենտրոն փիլիսոփայությունն է սոցիոմշակութային լեգիտիմության հուսալի ապավենն ու երաշխավորը:

Г. А. СОГОМОНЯН - Проблемы социокультурной легитимизации. - В переходном обществе проблема социокультурной легитимизации не имеет однозначной обусловленности, следовательно, и разрешения. Опыт реформ свидетельствует, что заимствование ценностей современной цивилизации часто встречает внутреннее сопротивление социальной системы и национального бытия, поскольку иногда социокультурные трансформации перерастают в “экспансию подражания”, не считаясь с возможностями их применения в новых условиях.

Исходя из результатов анализа трансформационных процессов, автор выдвигает идею, что надежным критерием социокультурной легитимности является равновесие этнокультурного наследия и основополагающих цивилизационных ценностей и норм.

¹⁹ R. Aron, Les etahes de la pansee sociologique. P., 1967, p. 30.